# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

**«15» սեպտեմբերի 2025 թվականի N 2119 -Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՄԻՆՏԵՌՆԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ N1/12 ՀԱՍՑԵԻ 40.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, 40.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (34.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կոմինտեռնի փողոց 1-ին նրբանցք N1/12 հասցեի 40.4 (քառասուն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտնակը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08092025-08-0056 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին, չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի N74-Ա որոշումը և քաղաքացի Արթուր Հովակիմյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N3522 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Կոմինտեռնի փողոց 1-ին նրբանցք N1/12 հասցեի 40.4 (քառասուն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնով՝ որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 424766 ( չորս հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսունվեց ) Հայաստանի Հանրապետության դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Արթուր Հովակիմյանին:
2. Գյումրի քաղաքի Կոմինտեռնի փողոց 1-ին նրբանցք N1/12 հասցեի 40.4 (քառասուն ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր արտաքին (34.68(երեսունչորս ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը՝ 110090(հարյուր տասը հազար իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արթուր Հովակիմյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Արթուր Հովակիմյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Արթուր Հովակիմյանի միջոցների հաշվին:

2025-09-15 12:17:04 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2118 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 36.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0758-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ն. Ղորղանյան փողոցի հարևանությամբ գտնվող 36.56 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0758-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ղորղանյան փողոց, 121/2 հողամաս**

2025-09-15 11:48:57 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2117 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20–Ի №1813-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թվականի մարտի 21-ի օրենքի 33–րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 20–ի «Գյումրի քաղաք, Լ. Մադոյան փողոց 13 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (կադաստրային ծածկագիր 08-001-1319-0007) երկու մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №1813-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման կայացման մեջ **«202.61»**, **«135.6»** թվերը փոխարինել համապատասխանաբար **«183.59»**, **«154.62»** թվերով:

2025.09.15 12:02:15 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2116-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Հ. ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ 33/3 ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №18062025-08-0041) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Վահրամ Հակոբյանի լիազորված անձ Իրինա Եղիազարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13128 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Հ. Շիրազի փողոց 33/3 Ատամնաբուժարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №18062025-08-0041) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **101.51** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Շիրազի փողոց, 37/1 հողամաս**

2) **89.09** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Շիրազի փողոց, 37/2 Ատամնաբուժարան**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2115-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 56Ա ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2465096) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Հարթենյանի լիազորված անձ Խաչիկ Հարթենյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13179 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մ. Խորենացու փողոց 56ա արտադրամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2465096) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 56/1 արտադրամաս**

2025-09-15 12:54:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2114-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Շ. ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ 5/13 (ՎԿԱՅԱԿԱՆ №17062024-08-0014) ԵՎ Շ. ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ 5/14 (ՎԿԱՅԱԿԱՆ №20012025-08-0017) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Հովհաննիսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13080 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Շ. Տալյան փողոց 5/13 (վկայական №17062024-08-0014) և Շ. Տալյան փողոց 5/14 (վկայական №20012025-08-0017) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Շ. Տալյան փողոց, 5/13 հողամաս**

2025-09-15 12:20:07 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2113-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 62,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0119-0009-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մարմաշենի խճուղու հարևանությամբ գտնվող 62,35 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0119-0009-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մարմաշենի խճուղի, 4/2 հողամաս**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» նոյեմբերի 2025 թվականի № 2112-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 24.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1181-0116-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու հարևանությամբ գտնվող 24.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1181-0116-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Երևանյան խճուղի, 159/28 հողամաս**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2111-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 1551 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով« հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի N 80-Ա որոշումը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Զանգակ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հունիսի 03-ին N 9130 թվագրմամբ) ՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի օգոստոսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Զանգակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին» N 1551-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   1) որոշման 1-ին կետում «03032015-08-0003) 898.27 (ութ հարյուր իննսունութ ամբողջ քսանյոթ հարյուրերրորդական)» թվերն ու բառերը փոխարինել «09122024-08-0033) 761.45 (յոթ հարյուր վաթսունմեկ ամբողջ քառասունհինգ հարյուրերրորդական)» թվերով և բառերով:
   2) որոշման 1-ին և 3-րդ կետերում «Զանգակ» բառը փոխարինել «Զանգակ-մսուր մանկապարտեզ» բառերով:
   3) որոշման 2-րդ կետում «քաղաքապետարանի» բառը փոխարինել «համայնքապետարանի» բառով, «ճարտարապետության» բառը փոխարինել «հողօգտագործման» բառով:
2. Լուծել գույքի անհատույց օգտագործման (գրանցված սեղանամատյանում թիվ 7273) պայմանագիրը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման նոր պայմանագիր:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել «Զանգակ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Զանգակ-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սիրանուշ Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-15 12:18:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2110-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ 2 ԹԱՂԱՄԱՍ 7-ՐԴ ՓՈՂՈՑ № 11/3 ՀԱՍՑԵԻ 19.60 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 7-րդ փողոց № 11/3 հասցեի 19.60 (տասնինն ամբողջ վաթսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 7-րդ փողոց № 11/3 հասցեի 19.60 (տասնինն ամբողջ վաթսուն հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2109-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՈՄԻՆՏԵՌՆԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 9 (ՎԿԱՅԱԿԱՆ №24062019-08-0010) ԵՎ ԿՈՄԻՆՏԵՌՆԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 11 (ՎԿԱՅԱԿԱՆ №04112022-08-0042) ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Նաիրա Խլղաթյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13441 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Կոմինտեռնի փողոց 2-րդ նրբանցք 9 (վկայական №24062019-08-0010) և Կոմինտեռնի փողոց 2-րդ նրբանցք 11 (վկայական №04112022-08-0042) բնակելի տների միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կոմինտեռնի փողոց, 2-րդ նրբանցք, 9-11 բնակելի տուն**

2025-09-15 16:01:10 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 15 » սեպտեմբերի 2025 թվականի № 2108-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԹՈՒՐ ՇՈՒԽՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 19 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Շուխյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13423 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Արթուր Շուխյանին պատկանող Գյումրի քաղաք, Ֆուրմանովի փողոց, 4-րդ նրբանցք 19 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Դ. Ֆուրմանովի փողոց, 4-րդ նրբանցք, 19/3 բնակելի տուն**

2025-09-15 15:52:37 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԴ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ　　　　　　Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2107-Ա

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԵՍՏԱԿԵՍ, ԱՂԱՍԻ, ԱՐԱՔՍՅԱ ՇՈՒԽՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ, 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 19 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արեստակես Շուխյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13430 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ժառանգության իրավունքով քաղաքացիներ Արեստակես, Աղասի, Արաքսյա Շուխյաններին պատկանող Գյումրի քաղաք, Ֆուրմանովի փողոց, 4-րդ նրբանցք 19 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Դ. Ֆուրմանովի փողոց, 4-րդ նրբանցք, 19/2 բնակելի տուն**

2025-09-15 15.51.37 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի **2025 թվականի №** 2106-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 24.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1181-0117-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու հարևանությամբ գտնվող 24.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1181-0117-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Երևանյան խճուղի, 159/27 հողամաս**

2025-09-15 15.54.33 GMT+4

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2105-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 24.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1181-0116-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու հարևանությամբ գտնվող 24.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1181-0108-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Երևանյան խճուղի, 159/26 հողամաս**

2025-09-15 15:55:32 GMT+4
Հանրապետական ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


**ՈՐՈՇՈՒՄ**

**«15» սեպտեմբերի 2025 թվականի N 2104-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N81/7 ՀԱՍՑԵԻ 22.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց N 81/7 հասցեի ավտոտնակը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ռոբերտ Երվանդի Մանվելյանին, (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2410970 վկայական :

Ավտոտնակի Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոցի N 81/7 հասցեի 22.57(քսան երկու ամբողջ հիսունյոթ տասնորտական) զբաղեցրած հողամասը ՀՀ Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ համակցված տարածական պլանավորման հատակագծի հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս;

Նշված հողամասում առկա շինությունն իր գործառական նշանակությանը համապատասխան օգտագործելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոցի N 81/7 հասցեի 22.57(քսաներկու ամբողջ հիսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2025-09-15 11:46:20 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

<<_15_>>_սեպտեմբերի_ 2025 թվականի N _2103_-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՇՈՒՌԻԿ ՀԱՅԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Շուռիկ Հայկի Հակոբյանի 2025 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի (այսուհետ՝ բաժին) պետի ժամանակավոր պաշտոնակատար Շուռիկ Հայկի Հակոբյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2025 թվականի սեպտեմբերի 16-ից:
**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 7 աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 16-ից 24-ը ներառյալ:
**3.** Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Շուռիկ Հայկի Հակոբյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ Գոհար Ստյոպայի Մկրտչյանին:
**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շուռիկ Հայկի Հակոբյանին և Գոհար Ստյոպայի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

### ՈՐՈՇՈՒՄ

<<15>> սեպտեմբերի 2025 թվականի N 2102-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԼԻԼԻԹ ԱՐԱԳԱԾԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163–րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիլիթ Արագածի Թովմասյանի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի ( այսուհետ՝ բաժին) պետ Լիլիթ Արագածի Թովմասյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2025 թվականի սեպտեմբերի 17-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 6 աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 17-ից 24-ը ներառյալ:
3. Ամենամյա նվազագույն արձակուրդի ընթացքում Լիլիթ Արագածի Թովմասյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել բաժնի պետի տեղակալ Էդգար Գագիկի Մարտիրոսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Արագածի Թովմասյանին և Էդգար Գագիկի Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2025 թվականի № 2101-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ 2 ՇԵՆՔ, 3 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 60.56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Գյումրի քաղաք, Իսահակյան փողոց 2 շենք, 3 բնակարան հասցեագրությամբ 60.56 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Իսահակյան փողոց, 2 շենք, 3 բնակարան**

2025-09-15 09:54:09 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի **2025 թվականի №** 2100-**Ա**

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ 4 ՇԵՆՔ 42 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 105.75 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Գյումրի քաղաք, Մսի կոմբինատ 4 շենք 42 բնակարան հասցեագրությամբ 105.75 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մսի կոմբինատ թաղամաս, 4 շենք, 42 բնակարան**

2025-09-15 09.42.57 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<_12_>>_սեպտեմբերի_2025 թվականի N_2099_-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՇԱԽՄԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՄԱՐԻՆԵ ԳՈՒՐԳԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Մարինե Գուրգենի Գևորգյանի 2025 թվականի սեպտեմբերի 10-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Մարինե Գուրգենի Գևորգյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից:
**2.** Չվճարվող արձակուրդի տևողությունը 5 օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից 19-ը ներառյալ:
**3.** Չվճարվող արձակուրդի ընթացքում Մարինե Գուրգենի Գևորգյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության գլխավոր մասնագետ Վահե Նորիկի Թորոսյանին:
**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Գուրգենի Գևորգյանին և Վահե Նորիկի Թորոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> սեպտեմբերի 2025 թվականի N 2098 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԼԻԼԻԹ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԺԵԼԱ ՎԱՆԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Անժելա Վանիկի Մանուկյանի 2025 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Լիլիթ-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրեն Անժելա Վանիկի Մանուկյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից:
**2.** Ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ:
**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Անժելա Վանիկի Մանուկյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության դաստիարակ Նարինե Լևոնի Սարգսյանին:
**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անժելա Վանիկի Մանուկյանին և Նարինե Լևոնի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>> սեպտեմբերի 2025 թվականի N 2097 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱԼԱՏ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՎԻԿՏՈՐՅԱ ՌՈՒԲԵՆԻ ՄԱՏԻՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Վիկտորյա Ռուբենի Մատինյանի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Մանկապատանեկան արվեստի պալատ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ( այսուհետ՝ կազմակերպություն ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վիկտորյա Ռուբենի Մատինյանին տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից:

**2.** Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 15 աշխատանքային օր՝ 2025 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 3-ը ներառյալ:

**3.** Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Վիկտորյա Ռուբենի Մատինյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել կազմակերպության փոխտնօրեն Տիգրանուհի Տիգրանի Խոռանյանին:

**4.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վիկտորյա Ռուբենի Մատինյանին և Տիգրանուհի Տիգրանի Խոռանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբեր 2025 **թվականի** N 2096-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏՅՈՄ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴՈՀ ՓՈՂՈՑ 5/10 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արտյոմ Դավթյանի 2025 թվականի օգոստոսի 15-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 08-ին 13290-2025 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արտյոմ Դավթյանին Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ փողոց 5/10 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 8 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Արտյոմ Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2095 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԱՎԱՐ ՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդները կազմակերպելու համար ստեղծել աճուրդային հանձնաժողով՝ հետևյալ անհատական կազմով
   1) Ավետիս Առաքելյանյան - Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,
   2) Հենրիկ Գասպարյան – Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետ,
   3) Կարեն Մխիթարյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի (այսուհետ բաժին) պետի ժամանակավոր պաշտոնակատար ,
   4) Հովսեփ Սիմոնյան - Գյումրի համայնքի ղեկավարի խորհրդական,
   5) Նարեկ Բեկզադյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   6) Կարեն Գրիգորյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   7) Աննա Մուրադյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   8) Լուսինե Անանյան - Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   9) Նարեկ Միրզոյան Գյումրի համայնքի ավագանու անդամ,
   10) Սահականուշ Գրիգորյան - բաժնի գործակալ
2. Նշանակել՝
   1) աճուրդավար՝ Ավետիս Առաքելյանին
   2) արձանագրող՝ Սահականուշ Գրիգորյանին
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում աճուրդային հանձնաժողովի անդամներին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-12 10:25:45 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2094-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» 5-րդ և 8-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի օգոստոսի 14-ի N 79-Ա որոշումը՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու համար 2025 թվականի հոկտեմբերի 15-ին հայտարարել աճուրդ:
2. Հաստատել աճուրդի հայտարարությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2025-09-12 14:05:16 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2025 **թվական** N 2093-Ա

**ՀԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25 -Ի № 1890-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Արման Արթուրի Պողոսյանը 2025 թվականի հուլիսի 8-ին /համայնքապետարանում մուտքագրված №9407-25թվագրմամբ դիմումով/՝ Գյումրի քաղաքի Լևոն Մադոյան փողոց 33 շենք 9 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարելու խնդրանքով:

Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 25-ի № 1890-Ա որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ,3-րդ մասերի դրույթներով՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 25-ի « Լևոն Մադոյան փողոց 33 շենք №9 հասցեում գտնվող բնակելի տան և դրա փաստացի զբաղեցրած հողամասի նկատմամբ համայնքի իրավունքները պետական գրանցման ներկայացնելու մասին» №1890-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Որոշման ընդունման տարին՝ « 2024» թիվը փոխարինել « 2025» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Արման Արթուրի Պողոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից :

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝**

2025-09-12 11:27:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**2025 թվական քաղաք Գյումրի**
**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«12» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2092-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱՄԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ № 17 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 68.95 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 26.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Թամարա Հովհաննեսի Կարապետյանին պատկանող Գյումրի քաղաքի Տերյան փողոց 1-ին նրբանցք № 17 հասցեի տան օրինական հողամասին կից ավել օգտագործում է 26.55 (քսանվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և սեփական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 68.95 (վաթսունութ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Թամարա Հովհաննեսի Կարապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2023RCQNJ2 ծածկագրով մուտքագրման տեղեկանքը և քաղաքացի Թամարա Հովհաննեսի Կարապետյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 01-ին № 8990 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Թամարա Հովհաննեսի Կարապետյանի (ծնված 1952 թվականի օգոստոսի 01-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Տերյան փողոց 1-ին նրբանցք № 17 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 26.55 (քսանվեց ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
2. Քաղաքացի Թամարա Հովհաննեսի Կարապետյանին պատկանող Գյումրի քաղաքի Տերյան փողոց 1-ին նրբանցք № 17 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 68.95 (վաթսունութ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները, ինքնակամ փակված 2 (երկու) պատուհանը, ինքնակամ բացված 2 (երկու) բացվածքը և ինքնակամ բացված 1 (մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 13625 (տասներեք հազար վեց հարյուր քսանհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Թամարա Հովհաննեսի Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025թ. ք.Գյումրի

2025-09-12 11:20:12 GMT+4
Հաստատված է E-ՓՆՏ-ի կողմից

mID

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«11» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2091 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 1931-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1 կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 28-ի «Անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Առաքելյանի Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա հասցեում արտաքին գովազդ տեղադրելու (տեղաբաշխելու) թույլտվություն տալու մասին»» N 1931-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Կոնվերս Անհատ ձեռնարկատեր Անդրանիկ Առաքելյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«11» սեպտեմբերի 2025 թվականի N 2090-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 105-րդ, 106-րդ կետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ 2025 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ժամը 10:30-ին, գումարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու արտահերթ նիստ (այսուհետ՝ նիստ):
2. Սահմանել նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2025-09-11 16:27:44 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. Գյումրի**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի 2025 թվականի
սեպտեմբերի 11 -ի N 2090-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

15-ը սեպտեմբերի 2025 թվական, սկիզբը՝ ժ. 10:30

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 58-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

<<11>> <<սեպտեմբերի>> **2025 թվականի N 2089-Ա**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԱՐԱՏ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ԲԱՐԵԽԻՂՃ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ 10 /ՏԱՍ/ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ԻՐ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Աշխատանքային օրենսգրքի» 178 հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով, 219 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արարատ կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 թվականի սեպտեմբերի 04-ին N 3148 թվագրմամբ).

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. «Արարատ կրթահամալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 10 /տաս/ աշխատակիցներին՝ աշխատանքների բարեխիղճ կատարման համար, միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ յուրաքանչյուրին իր դրույքի չափով, խրախուսելու նպատակով հատկացնել 1 059 725 /մեկ միլիոն հիսունինը հազար յոթ հարյուր քսանհինգ/ Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված վերաբաշխումները կատարել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2025-09-11 10:43:01 GMT+4
Հաստատված է ԷԼԻՊԵՆԳ-ի կողմից

mID

**Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

Հավելված N
համաձայն 11 սեպտեմբերի 2025թ
N 2089-Ա համայնքի ղեկավարի որոշման

Կ.Տ

# Ց ՈՒ Ց Ա Կ

**<<Արարատ կրթահամալիր>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության պարգևատրման ենթակա թվով 10 /տաս/ աշխատակիցների**

| Հ/Հ | անվանում | Ընդամենը գումարը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Գևորգյան Ժանետա | 105,680 |
| 2 | Գևորգյան Արեգնազ | 105,160 |
| 3 | Ավագյան Լիանա | 141,032 |
| 4 | Մարգարյան Մարիամ | 98,400 |
| 5 | Վարդանյան Գոհար | 61,845 |
| 6 | Ռուզաննա Մարգարյան | 98,400 |
| 7 | Մարտիրոսյան Անահիտ | 98,888 |
| 8 | Բագրատյան Ալվարդ | 105,160 |
| 9 | Հայդոսյան Անահիտ | 140,000 |
| 10 | Հայրապետյան Համիկ | 105,160 |
| | **Ընդամենը** | **1,059,725** |

տնօրեն Ս.Սարգսյան

Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2088Ա

**<<ՅՈՒՆԻՓԵՔ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾ 16/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Յունիփեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 05-ին ներկայացրած հայտը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 05-ին 13187-2025 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել <<Յունիփեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Արագած 16/4 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2.71 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Յունիփեք>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Կարեն Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025.09.10 12:24:49 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*«10» սեպտեմբերի 2025 թվականի N 2087-Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 50.59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 50.59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (45.93 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասում, 50.59 (հիսուն ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 50.59 (հիսուն ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (45.93(քառասունհինգ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացին Վահան Մկրտչյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023WS4PT4 ծածկագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի քաղաքի Մսի կոմբինատ թաղամասում, 50.59 (հիսուն ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 50.59 (հիսուն ամբողջ հիսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (45.93(քառասունհինգ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վահան Մկրտչյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-09-10 16:37:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2086 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 2629-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի N 2629-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 05/06/2025 թվականի N Կ-05062025-08-0012 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի սեպտեմբերի 18-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոց N 29 հասցեի 186,59 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան և դրա կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 333,1 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Վահակ Մկրտիչի Գրիգորյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 2629-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝
   1) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<333,1(երեք հարյուր երեսուներեք ամբողջ մեկ տասնորդական)>> թիվն ու բառերը փոխարինել <<316,36(երեք հարյուր տասնվեց ամբողջ երեսունվեց հարյուրերորդական)>> թվով և բառերով.
   2) վերնագրում, նախաբանում, որոշման 1-ին կետում <<բնակելի տուն>> բառից հետո լրացնել <<օժանդակ շինություն, ավտոտնակ>> բառերը:

2025-09-10 16:36:23 GMT+4
Հաստատված է ԷՍՏՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2085-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈԼԵՅԲՈԼԻ 2009-2010 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի 2009-2010 թվականների ծնված պատանիների 2025 թվականի սեպտեմբերի 17–21–ը Էջմիածին համայնքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 10-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի 2009-2010 թվականների ծնված պատանիների առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի սեպտեմբերի 17–21–ը Էջմիածին համայնք գործուղել 10 մարզիկի և 1 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (բոլոր ծախսերը) 438.500(չորս հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
________________ N ________ որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի 2009-2010 թվականների ծնված պատանիների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ղազարյան | Մելիքսեթ | մարզիկ | AL0642081 | 2622681210981001 | 39.500 |
| 2. | Մկրտչյան | Վազգեն | մարզիկ | AL0363163 | 1630011627309 | 39.500 |
| 3. | Կարապետյան | Գոռ | մարզիկ | AT0323017 | 220362163291000 | 39.500 |
| 4. | Նորյան | Արմեն | մարզիկ | AS0617057 | 1570099454270100 | 39.500 |
| 5. | Դեմիրճյան<br>Դեմիրճյան | Արման<br>Նաիրա | մարզիկ<br>ծնող | AT0543282 | 1510020548575400 | 39.500 |
| 6. | Դեմիրճյան<br>Դեմիրճյան | Վարդան<br>Նաիրա | մարզիկ<br>ծնող | AT0543282 | 1510020548575400 | 39.500 |
| 7. | Պետրոսյան | Օնիկ | մարզիկ | AL0640968 | 1570088870188700 | 39.500 |
| 8. | Գրիգորյան | Մկրտիչ | մարզիկ | AV0404659 | 11802055359000 | 39.500 |
| 9. | Աղանյան | Վարուժան | մարզիկ | AT0637669 | 11802054770900 | 39.500 |
| 10. | Կիրակոսյան | Յաշա | մարզիկ | AX0361144 | 220361494705000 | 39.500 |
| 11. | Մանուկյան | Եղիշե | մարզիչ | AU0631293 | 1570048014500100 | 43.500 |
| Ընդամենը | | | | | | 438.500 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2084-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԿԱԹ/ԳԾԻ N 40/4 ՀԱՍՑԵԻ 114,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ 85,32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԼՈԿՈՄՈՏԻՎԱՅԻՆ ԴԵՊՈՅԻ ՋԵՐՄԱՔԱՐՇԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՇԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Երկաթ/գծի N 40/4 հասցեի լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի 85,32 (ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար հատկացված 114,81 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը բնակվելու նպատակով նվիրաբերվել է քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 03 ապրիլի 2014 թվականի N 405-Ա որոշում):

Քաղաքացի Անդրանիկ Մանուկյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին իրեն նվիրաբերած Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 114,81 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 85,32(ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի շենքի գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Անդրանիկ Մանուկյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 25-ին N 12279 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 114,81 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագծին, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 85,32(ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի նպատակային նշանակությունը արտադրականից բնակելիի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Անդրանիկ Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2025-09-10 14:22:52 GMT+4
Համաձայնված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2025 թվականի №2083-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 01-Ի №1991–Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ, ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 01-ի №1991–Ա որոշմամբ օրինական ճանաչված եվ համայնքային սեփականություն համարված հասարակական շինությանը, դրա կառուցման ու սպասարկման համար սահմանազատված հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Խանջյան փողոց, 9/1 շինություն**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

« 10 » սեպտեմբերի 2025 թվականի № 2082-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 60/6 (ՎԿԱՅԱԿԱՆ №09062022-08-0030) ԵՎ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ 60/4 (ՎԿԱՅԱԿԱՆ №04112020-08-0005) ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Դավիթ Գդյանի լիազորված անձ Լուսինե Մխիթարյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13119 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Մ. Խորենացու փողոց 60/6 (վկայական №09062022-08-0030) և Մ. Խորենացու փողոց 60/4 (վկայական №04112020-08-0005) հողամասերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 60/6 հողամաս**

2025-09-10 09:55:32 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2025 թվականի №2081-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ն. ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ 4/4 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №14072025-08-0054) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, չափագրման արտոնագիր ունեցող «Մինասյան Մարինե Լուկաշենի» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ն. Ռիժկովի փողոց 4/4 հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №14072025-08-0054) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **19.03** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ռիժկովի փողոց, 4/4 հողամաս**

2) **43.84** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ռիժկովի փողոց, 4/18 հողամաս**

3) **19.03** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ռիժկովի փողոց, 4/19 հողամաս**

2025-09-10 10:50:04 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«10» սեպտեմբերի 2025 թվականի № 2080Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 105Ա ՇԵՆՔ, 16 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №13112019-08-0027) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Մկրտչյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13021 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Երևանյան փողոց 105ա շենք, 16 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №13112019-08-0027) վերահասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Երևանյան խճուղի, 105ա շենք, 16 բնակարան**

2025.09.10 09:53:33 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2079-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՌԼՈՍ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 64 Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կառլոս Սաֆարյանի 2025 թվականի սեպտեմբերի 03-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին 13017-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Կառլոս Սաֆարյանին Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ 64 Ա հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1.3 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 03-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կառլոս Սաֆարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025.09.09 13:55:14 GMT-4
Հաստատված է ԷՀԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2078Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԵՆ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇՉԵԴՐԻՆԻ 9/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարեն Խլղաթյանի 2025 թվականի սեպտեմբերի 03-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին 12977-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Կարեն Խլղաթյանին Գյումրի քաղաքի Շչեդրինի 9/1 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 03-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Կարեն Խլղաթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025.09.09 14:01:30 GMT-4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N2077Ա

**<<ԼԵՆՏԵՔՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐՈ ՀԱԼԱԲՅԱՆ 7/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Լենտեքս>> սահմանապակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի սեպտեմբերի 03-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին 13063-2025 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել <<Լենտեքս>> սահմանապակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի Կարո Հալաբյան հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Լենտեքս>> սահմանապակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն՝ Կ. Գոմցյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2076-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ № 6/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 82.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (71.66 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 234.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՄՍՈՆԻ ԲԱԴԵՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Տեր-Գաբրիելյան փողոց № 6/12 հասցեի 234.9 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30052025-08-0041 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» պրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 20-ի № 53-Ա որոշումը և քաղաքացի Սուսաննա Բադեյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի հունիսի 5-ին № 11234 թվագրմամբ)՝

**Որոշում եմ.**

1. Գյումրի քաղաքի Ս. Տեր-Գաբրիելյան փողոց № 6/12 հասցեի 82.87 (ութսուներկու ամբողջ ութսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (71.66 (յոթանասունմեկ ամբողջ վաթսունվեց հարյուրերրոդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 353523 (երեք հարյուր հիսուներեք հազար հինգ հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի շինությունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սուսաննա Սամսոնի Բադեյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս. Տեր-Գաբրիելյան փողոց № 6/12 հասցեի 234.9 (երկու հարյուր երեսունչորս ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սուսաննա Սամսոնի Բադեյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի ՀանրապետությանԳյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սուսաննա Սամսոնի Բադեյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Սամսոնի Բադեյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սուսաննա Սամսոնի Բադեյանի միջոցների հաշվին:

2025-09-09 10:55 04 GMT+4
Հաստատված է ԷԿՆՆԳ-ի կողմից

mID

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 թվականի № 2075-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ, ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՐՈՒՊՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 80 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏԱԿ ՋԱՄԲԱԶՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի հուլիսի 10-ի որոշումը, քաղաքացի Արտակ Ջամբազյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված № 13023 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Կրուպսկայա փողոց, թիվ 80 հասցեում գտնվող դատարանի որոշմամբ քաղաքացի Արտակ Ջամբազյանին պատկանող բաժնեմասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խ. Դաշտենցի փողոց, 80/3 բնակելի տուն**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025-09-09 13:24:11 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2074-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա.ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 43/1 ՀԱՍՑԵԻ 6.25 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ա.Մյասնիկյան փողոցի № 43/4 հասցեի 608.77 (վեց հարյուր ութ ամբողջ յոթանասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա առկա շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 01092023-08-0008 վկայական):

Գյումրի քաղաքի Ա.Մյասնիկյան փողոցի № 43/1 հասցեի 6.25 (վեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 04092025-08-0035 վկայական):

Քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ա.Մյասնիկյան փողոցի № 43/4 հասցեի հողամասին կից Ա.Մյասնիկյան փողոցի № 43/1 հասցեի 6.25 (վեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրվող հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, $48^1$-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի № 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի ապրիլի 9-ին № 4678 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանին աստիճաններ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Ա.Մյասնիկյան փողոցի № 43/1 հասցեի 6.25 (վեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 5(հինգ) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 13750 (տասներեք հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
   1) Պարտավորեցնել քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանին.
   2) Աստիճաններ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
   3) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:

4) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

3. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանի միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարտին Արթուրի Մելքոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840

**2025թ. ք.Գյումրի** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N2073-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 1511-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով քաղաքացի Ներսես Մկոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 25-ին N 12335 թվագրմամբ)՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2015 թվականի օգոստոսի 20-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Ղարիբջանյան խճուղի N 3/11 հասցեի շինությունն ու հողամասը քաղաքացի Ներսես Մկոյանին վարձակալության տրամադրելու մասին» N 1511-Ա որոշումը:
2. Լուծել հողամասի և անշարժ գույքի վարձակալության 2015 թվականի նոյեմբերի 13-ի (գրանցված սեղանամատյանում N 8644) N 15-1511 պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե N 18112015-08-0059 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ներսես Մկոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-08 09:39:52 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2072-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑԻ N 1/5 ՀԱՍՑԵԻ 90,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի N 1/5 հասցեի 90,0 (իննսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, **որոշում եմ.**

1. Գյումրի քաղաքի Մ. Թետչերի փողոցի N 1/5 հասցեի 90,0 (իննսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական:

2025-09-08 13:06:07 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 թվականի № 2071-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Հ. ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 136/1 (ՎԿԱՅԱԿԱՆ №14092021-08-0017) ԵՎ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 136/3 (ՎԿԱՅԱԿԱՆ №14092021-08-0013) ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Վարդանյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №13055 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Հ. Մազմանյան փողոց 136/1 (վկայական №14092021-08-0017) և Մազմանյան փողոց 136/3 (վկայական №14092021-08-0013) անշարժ գույքերի միավորումից առաջացած անշարժ գույքը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Մազմանյան փողոց, 136/1 շինություն**

2025-09-09 10:44:06 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 թվականի №2070Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 0.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0099-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոցի հարևանությամբ գտնվող 0.8 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0099-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 32/4 հողամաս**

2025-09-09 10:43:03 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2025 թվականի № 2069Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 0.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0099-0001-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Խորենացու փողոցի հարևանությամբ գտնվող 0.8 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0099-0001-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Խորենացու փողոց, 32/5 հողամաս**

2025-09-09 10:41:21 GMT-4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2068-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Խ. ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑ № 2/1 ՀԱՍՑԵԻ 80.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Խ. Կոշտոյան փողոց № 2/1 հասցեի 80.39 (ութսուն ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Խ. Կոշտոյան փողոց № 2/1 հասցեի 80.39 (ութսուն ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2025-09-05 16:11:30 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<<_08_>>_սեպտեմբերի_ 2025 թվականի N _2067_-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՊԱՐԻ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱՐՏԱԿ ՍԻՄՈՆԻ ՇԱԽՄԻՐԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով << Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիաննա Սերգեյի Մամյանի 2025 թվականի սեպտեմբերի 5-ի զեկուցագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության() տնօրեն Մարիաննա Սերգեյի Մամյանի աշխատանքային պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության գեղարվեստական ղեկավար Արտակ Սիմոնի Շախմիրանյանին՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ից 18-ը ներառյալ:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիաննա Սերգեյի Մամյանին և Արտակ Սիմոնի Շախմիրանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<08>> սեպտեմբերի 2025 թվականի N 2066 -Ա

## ԱՐԱՄ ՎԱԶԳԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՀԱՎԵՐԺ ՀԻՇԱՏԱԿ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Արամ Վազգենի Պետրոսյանի 2025 թվականի սեպտեմբերի 8-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Արամ Վազգենի Պետրոսյանին ( ծնված՝ 1959 թվականի օգոստոսի 25-ին, նույնականացման քարտ ՝ N 018298067, տրված՝ 2025 թվականի հունիսի 10-ին՝ ՀՀ ոստիկանության 064-ի կողմից, հաշվառման վայրը՝ քաղաք Գյումրի, Սահմանապահների 34/3, հանրային ծառայությունների համարանիշ՝ 3508590402 ) 2025 թվականի սեպտեմբերի 9-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի Գյումրի համայնքի << Հավերժ հիշատակ >> փակ բաժնետիրական ընկերության ( այսուհետ՝ ընկերություն ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:

**2.** Աշխատավարձը սահմանել համաձայն ընկերության հաստիկացուցակով սահմանված պաշտոնային դրույքաչափի:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արամ Վազգենի Պետրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» սեպտեմբերի 2025 **թվականի** N2065-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 3/5 ՀԱՍՑԵԻ 285.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի փողոց N 3/5 հասցեի 285.0 (երկու հարյուր ութսունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասը, որը սեփականության իրավունքով պատկանում է «Եվրոպա-7» ՍՊԸ-ին, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2883388 վկայականը, կադաստրային ծածկագիրը՝ 08-001-1223-0035): Կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, հիմք ընդունելով քաղաքացի Խաչատուր Մարտիրոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հուլիսի 22-ին N 10269 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Գ. Նժդեհի փողոց N 3/5 հասցեի 285.0 (երկու հարյուր ութսունհինգ) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:

2025-09-08 11:02:13 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

***«08» սեպտեմբերի 2025 թվականի N2064-Ա***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N1929-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 27-ի «Քաղաքացի Ռիտա Մնացականի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N204 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 34.26 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 5.55 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N1929-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով;

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 27-ի «Քաղաքացի Ռիտա Մնացականի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N204 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 34.26 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 5.55 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N1929-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) որոշման նախաբանում և 2-րդ կետում <<5.5 (հինգ ամբողջ հինգ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել << 5.55 (հինգ ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) >>թվով և բառերով.

2) որոշման մեջ լրացնել նոր կետ հետևյալ շարադրանքով.

<<ընդհանուր բակի 16.97 (տասնվեց ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան, անկառուցապատ հողամասի նկատմամբ ճանաչել ընդհանուր բակի համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը>>.

2025-09-08 11:11:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2063-Ա

**<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով <<Տրիպլ Սի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի օգոստոսի 25-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի օգոստոսի 29-ին 12609-2025 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Թույլատրել <<Տրիպլ Սի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը Գյումրի քաղաքի վարչական տարածքում՝ ավտոբուսային կանգառներին տեղադրել (տեղաբաշխել) գովազդային պաստառներ՝ ընդհանուր 352 քմ մակերեսով՝ համաձայն հավելվածի:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 25-ը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Տրիպլ Սի>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Ն. Դավթյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-08 13:11:33 GMT+4
Հաստատված է ԷՍՆԳ-ի կողմից

mID

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

**Հավելված**

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ղեկավարի պաշտոնակատար
2025 թ.
N ... որոշման

ՑՈՒՑԱԿ
<<ՏՐԻՊԼ ՍԻ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ (ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ) ՀԱՍՑԵՆԵՐԻ

| Հ/Հ | ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ | Քանակ | (քառ. մ) |
|---|---|---|---|
| 1 | Տերյան փողոց 1 ռեստորանի հարևանությամբ, ՎԼՎ էլեկտրոնային խանութի դիմաց | 1 | 7 |
| 2 | Տերյան փողոց 2 Գյումրու ազգային ճարտարապետության քաղաքաշինության թանգարանի հարևանությամբ | 1 | 7 |
| 3 | Տերյան փողոց 3 Գյումրու ազգային ճարտարապետության և քաղաքային կյանքի թանգարանի դիմաց | 1 | 9 |
| 4 | Վազգեն Սարգսյան 4 ՀՊՏՀ ԳԲ-ի դիմաց | 1 | 9 |
| 5 | Վազգեն Սարգսյան 5 ՀՊՏՀ ԳԲ-ի դիմաց | 1 | 9 |
| 6 | Վազգեն Սարգսյան 6 Բոնցքամարտի դպրոցի և Ամերիաբանկի հարևանությամբ | 1 | 9 |
| 7 | Երկաթուղու կայարան 1 շինանյութի խանութի հարևանությամբ | 1 | 9 |
| 8 | Երկաթուղու կայարան 2 | 1 | 9 |
| 9 | Տիգրան Մեծ 5 սուպերմարկետի դիմաց | 1 | 9 |
| 10 | Պարույր Սևակ | 1 | 9 |
| 11 | Պարույր Սևակ (եկեղեցու դիմաց) | 1 | 9 |
| 12 | Գորկու փողոց (10-րդ դպրոցի կողքին) | 1 | 9 |
| 13 | Տիգրան Մեծ 4 (Գվուզ ռեստորանային մոտ) | 1 | 7 |
| 14 | Տիգրան Մեծ 3 (Գվուզ ռեստորանային դիմաց) | 1 | 7 |
| 15 | Տիգրան Մեծ 2 (տեխնիկայի քոլեջի դիմաց) | 1 | 7 |
| 16 | Տիգրան Մեծ 1 (տեխնիկայի քոլեջի կանգառ) | 1 | 7 |
| 17 | Շիրակացի 5 (Վեգա էլեկտրոնիքս խանութի մայթին) | 1 | 14 |
| 18 | Գարեգին Նժդեհ 2 (դատարանի շենքի կողքին և Կումկումա ռեստորանի ոլորանին) | 1 | 9 |
| 19 | Կարս 1 (Մայր Հայաստանի արձանի աստիճանների կողքին) | 1 | 9 |
| 20 | Կարս 2 (Մայր Հայաստանի արձանի աստիճանների կողքին) | 1 | 9 |
| 21 | Գարեգին Նժդեհ 4 (Բարեկամության զբոսայգու գլխավոր մուտքի դիմաց) | 1 | 9 |
| 22 | Երևանյան խճուղի 1գարեջրի գործարանի կողքին | 1 | 9 |
| 23 | Երևանյան խճուղի 2 մեծ անիվ խանութի կողքին | 1 | 9 |
| 24 | Երևանյան խճուղի 3 ունիվերսամի և ռեստորանի կողքին | 1 | 9 |
| 25 | Երևանյան խճուղի 4 սուպերմարկետի կողքին | 1 | 9 |
| 26 | Երևանյան խճուղի 5 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ | 1 | 9 |
| 27 | Երևանյան խճուղի 6 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ | 1 | 9 |
| 28 | Երևանյան խճուղի 7 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ | 1 | 9 |
| 29 | Երևանյան խճուղի 8 քաղաք մտնող գլխավոր մայրուղու ուղղությամբ | 1 | 9 |
| 30 | Վազգեն Սարգսյան 3 զինվորական դատախազության և թիվ 19 դպրոցի հարևանությամբ | 1 | 9 |
| 31 | Ջիվանի փողոց 1 | 1 | 14 |
| 32 | Ջիվանի փողոց 2 | 1 | 9 |
| 33 | Բագրատունյաց հրապարակ | 1 | 14 |
| 34 | Անկախության փողոց | 1 | 24 |
| 35 | Հաղթանակի պողոտա | 1 | 28 |
| | **Ընդամենը** | 35 | 352 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 թվականի N 2062-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ (ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Համլետ Մկրտչյանի 2025 թվականի սեպտեմբերի 03-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 04-ին 13074-2025 թվագրմամբ)՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Համլետ Մկրտչյանին Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհ 17 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 2.6 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 01-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Համլետ Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

**2025թ. ք. Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2061-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԱԲԱՑ 3-ՐԴ ՇԱՐՔ N 30 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 3-րդ շարք N 30 հասցեի 380.05 (երեք հարյուր ութսուն ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Հասմիկ Վոլոդյայի Ավոյանին և Գևորգ Սերյոժայի Ավոյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01092022-08-0033)։ Նշված շինությունը և հողամասը չափագրման ժամանակ կադաստրային քարտեզում սխալ է տեղադրվել իր իրական տեղադիրքից, որի արդյունքում առաջացել է հողամասի և շինության տեղադիրքի և սահմանների ճշտման անհրաժեշտություն։

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված կողմնային չափերով և տեղադիրքով։

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 2-րդ հավելվածի և հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Սերյոժայի Ավոյանի դիմումը (մուտքագրված Գյումրու համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 5-ին N 11063 թվագրմամբ), **որոշում եմ.**

1. Հաստատել «Ս Ֆոռմատ Սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված, քաղաքացիներ Հասմիկ Վոլոդյայի Ավոյանին և Գևորգ Սերյոժայի Ավոյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Այգաբաց 3-րդ շարք N 30 հասցեի 380.05 (երեք հարյուր ութսուն ամբողջ հինգ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-1172-0020 կադաստրային ծածկագրով հողամասի և շինության տեղադիրքը և հատակագիծը։
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և կառուցապատման իրավունքի վերագրանցման նպատակով։

Восстановимая подпись

X

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 թվականի № 2060-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ 2/13 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 391.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1317-0108) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Ղուկասյան փողոց 2/13 հասցեի անշարժ գույքի հարևանությամբ գտնվող 391.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1317-0108) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Յ. Վարդանյան փողոց, 9/1 հողամաս**

2025-09-08 08:37:11 GMT+4
mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 թվականի №2059Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 251.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0701-0045-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 251.2 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0701-0045-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 181/16 հողամաս**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2058-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 51-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով հողամասի վարձակալության պայմանագրի V-րդ բաժինը և այն հանգամանքը, որ քաղաքացի Արմենակ Մադոյանը չի կատարել պայմանագրի VI բաժնի դրույթները՝ **ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**.

1. Ուժը կորցրած ճանաչել 2014 թվականի հունվարի 16-ի Հայաստանի Հանրապետության Գյումրի համայնքի ղեկավարի «Քաղաքացի Արմենակ Լևոնի Մադոյանին որպես վարելահող օգտագործելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին» N 51-Ա որոշումը:
2. Լուծել հողամասի վարձակալության 2014 թվականի մայիսի 23-ի (գրանցված սեղանամատյանում N 3805) պայմանագիրը:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե N 30052014-08-0009 վկայականը չեղարկելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արմենակ Մադոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-09-05 16:15:23 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 թվականի № 2057-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ 63 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2400586) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արման Գրիգորյանը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №12326 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաք, Ֆուրմանովի փողոց 63 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2400586) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **204.83** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Դ. Ֆուրմանովի փողոց, 63 բնակելի տուն**

2) **22.51** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Դ. Ֆուրմանովի փողոց, 63/1 բնակելի տուն**

2025-09-08 09:45:47 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 թվականի №2056Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 213.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0213-0005-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի հարևանությամբ գտնվող 213.28 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0213-0005-ից) տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Գործարանային փողոց, 7/2 հողամաս**

2025-09-08 16:44:22 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«08» սեպտեմբերի 2025 թվականի № 2055 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 337.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Շիրակացու փողոցի հարևանությամբ գտնվող 337.3 քառակուսի մետր մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Շիրակացու փողոց, 11/39 հողամաս**

2025-09-06 09:57:51 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ու Մ

«05» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2054-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 1179-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 19-ի N 1179-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 19-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ավտոկայանի տարածք N 15/1 հասցեի առևտրի և սպասարկման օբյեկտի գործառական նշանակությունը փոփոխելու մասին>> N 1179-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
    1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<79,47(յոթանասունինն ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական)>>թիվը և բառերը փոխարինել <<77,02(յոթանասունյոթ ամբողջ երկու հարյուրերորդական)>> թվով և բառերով:

2025-09-05 16:12:21 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«05» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2053-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի N 1262-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի N 1262-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հուլիսի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ավտոկայանի տարածք N 15 հասցեի ճաշարանի գործառական նշանակությունը փոփոխելու մասին>> N 1262-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) նախաբանում, որոշման 1-ին կետում <<22.13(քսաներկու ամբողջ տասներեք հարյուրերորդական)>>թիվը և բառերը փոխարինել <<21,87(քսանմեկ ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական)>> թվով և բառերով:

2025-09-05 17:27:39 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2052 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 01-Ի N 1909-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի N 1909-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 27/05/2025 թվականի N Կ-27052025-08-0209 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի օգոստոսի 01-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Հ.Սարգսյան փողոցի հարևանությամբ գտնվող 74,21 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության և դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա 161,74 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Մերուժան Լյուդվիգի Մաթևոսյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 1909-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) նախաբանից հանել <<կադաստրի կոմիտեում հաշվառված է 2023 AEJ2GB ծածկագրով>> բառերը և թվերը:

2025-09-05 17:29:13 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«05» սեպտեմբերի 2025 **թվականի** N 2051-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 9 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի <<դ>> պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերություններով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 9 մանկապարտեզների համար «Հակահրդեհային սարքերի տեղադրման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմավորել.

1)պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով՝

ա. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Կարեն Մխիթարյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

բ. պատասխանատու ստորաբաժանման աշխատակից՝ Կարեն Կարապետյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ

2) գնումների համակարգող՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Անի Ավդալյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

2025-09-05 10:04:48 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«05» սեպտեմբերի 2025 թվականի N 2050Ա,

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԹՎՈՎ 9 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»-Ի ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, 6-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ, 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ, 8-րդ կետի 3-րդ ենթակետով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի«Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ»համայնքային կառավարչական հիմնարկի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգի միջոցով թվով 9 մանկապարտեզների «Հակահրդեհային սարքերի տեղադրման աշխատանքներ»-ի ձեռքբերման նպատակով կազմավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով ՝

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ավետիս Առաքելյան – Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

2)Դմիտրի Մանվելյան –Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

3) Արմինե Ներսիսյան- Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ,

4) Անահիտ Խաչատրյան–Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար,

5)Էդգար Մարտիրոսյան-Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի տեղակալ,

Հանձնաժողովի քարտուղար՝

6)Անի Ավդալյան– Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առաջին կետում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք. Գյումրի**